ՄԱՅՐ ԱԹՈՌ

Նոր տարվա առթիվ Ս. Էջմիածնի Մայր Տաճարում հանդիսավոր պատարագ մատուցվեց հոծ բազմության ներկայությամբ։ Ս. պատարագից հետո, որին ներկա էր Վեհափառ Հայրապետը, տեղի ունեցավ Հայրապետական մաղթանք։ Պատարագիչ գերապատիվ Տ. Ռուբեն սրբազանը ամուր պատշաճի ատենաբանեց։ Պատարագից հետո Վեհափառ Հայրապետը, բազմած Հայրապետական գահին, ընդունեց ժողովրդի շնորհավորանքները։ Մեծից մինչև փոքրը մոտենալով ու շնորհավորելով Վեհի Նոր տարին համբուրում էին Նրա աջը և ընդունում Հայրապետի հայրական օրհնությունը։

Պատարագից հետո միաբանությունը հրավիրվեց Վեհարան։ Միաբանները շնորհավորելով Վեհի Նոր տարին սրտալից բարեմաղթություններ արին, ցանկանալով Նրան առողջություն և երկար կյանք։

Վեհարանում տեղի ունեցավ ճաշկերույթ, որից հետո Վեհը առանձնացավ հանգստանալու։

***

Ճրագալույսի երեկոյան տաճարը լի էր աղոթողներով։ Պատարագում էր Տ. Սահակ վարդապետ Տեր-Հովհաննիսյանը։ Ջրօրհնյաց հանդեսն անցավ շատ շքեղ և տպավորիչ։ Պատարագում էր Տ. Ռուբեն եպիսկոպոսը, որը խուռն բազմության ներկայությամբ կատարեց ջրօրհնյաց արարողությունը։ Հանդեսին ներկա էր Վեհափառ Հայրապետը։

***

Նոր տարվա առթիվ Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Զ-ի անունով բազմաթիվ շնորհավորական հեռագրեր են ստացվել թե ՍՍՌ Միության և թե արտասահմանյան թեմերից։ Հեռագրողները երկար կյանք և առողջություն են մաղթում Վեհափառ Հայրապետին։

***

Հունվարի 22-ին Ճեմարանի դահլիճում Ս. Էջմիածնի միաբանության, ուսուցիչների, ուսանողների և տեխնիկական աշխատողների մասնակցությամբ տեղի ունեցավ սգո հանդիսավոր նիստ նվիրված Հանճարեղ ԼԵՆԻՆԻ մահվան տարեդարձին։

Ուսուցիչ Արտաշես Դիլոյանը պատմեց ԼԵՆԻՆԻ կյանքի ու գործունեության մասին։

***

Բարեպաշտ Կարապետ Ասլամազյանին շնորհվեց քահանայական և վարդապետական կոչում։ Ձեռնադրությունը կատարեց պատարագիչ Տ. Ռուբեն եպիսկոպոսը։